ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

Վահե Ոսկանի Պողոսյանի ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ***«Կուսակցական լիդերության ինստիտուտի կայացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում»*** վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ

Պաշտպանության ներկայացվող ատենախոսության թեման խիստ արդիական է և վերաբերում է քաղաքական ղեկավարման համեմատաբար քիչ հետազոտված թեմայի, ինչպիսին է կուսակցական լիդերությունը:

Կուսակցական լիդերությունը, ինչպես իրավացիորեն նկատում է ատենախոսը, Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի հիմնային սուբյեկտներից մեկն է հանդիսանում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնասիրության տվյալ թեման համեմատաբար քիչ է ուսումնասիրված ոչ միայն արտասահմանյան, այլև հայրենական քաղաքագիտական գրականության մեջ, կուսակցական լիդերության հետազոտության հրամայականն էլ ավելի արդիական է դառնում: Ողջունելի ենք համարում նաև հեղինակի այն մեկնաբանությունը, ըստ որի՝ հետազոտական թեմայի արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության անկախություն ձեռք բերելուց հետո տեղի ունեցած հասարակական-քաղաքական փոփոխություններով, ինչպես նաև Հայաստանում խորհրդարանական կառավարման համակարգին անցնելուց հետո՝ ՀՀ վարչապետի ընտրությունների արդյունքում տեղի ունեցած իրադարձություններով: Այսօր առավել քան ակնհայտ է, որ կուսակցական համակարգին անցնելուց հետո Հայաստանի

Հանրապետությունում առկա է կուսակցական լիդերների դերի նշանակալի բարձրացում, ովքեր փաստացի իրենց ձեռքում կենտրոնացնելով իշխանական ռեսուրսները՝ իրականացնում են միանձնյա կառավարում, ովքեր էլ չեն տիրապետում այդ ռեսուրսներին, ունեն զգալի ազդեցություն ներպետական քաղաքական մրցապայքարի ընթացքի վրա:

Աշխատության ներածական հատվածում հեղինակը սահմանել է հստակ նպատակ և խնդիրներ, իսկ ուսումնասիրության մեջ անդրադարձել է յուրաքանչյուրին՝ տալով սահմանած հարցադրումների պատասխանները: Ուսումնասիրության ընթացքում հեղինակն օգտագործել է մեթոդաբանական հարուստ գործիքակազմ, ինչը հնարավորություն է ընձեռել կատարել համապարփակ ուսումնասիրություն՝ հետազոտական հարցերին նայելով հնարավոր բոլոր տեսանկյուններից:

Ատենախոսի ուսումնասիրության արդյունքներն ամբողջությամբ ներկայացված են եզրակացություններում: Դրանք աչքի են ընկնում հստակությամբ, համակարգվածությամբ և բխում են հետազոտության արդյունքներից: Լիովին համամիտ եմ ատենախոսի այն կարծիքի հետ, ըստ որի՝ հետազոտության արդյունքներն ունեն կարևոր գիտա-գործնական նշանակություն և կարող են օգտակար լինել ժամանակակից հայաստանյան իրողություններին առավել համապատասխան կուսակցական լիդերների տիպերի և մոդելների բացահայտման համատեքստում:

Ներկայացված աշխատանքի ուժեղ կողմերից է հանդիսանում նաև օգտագործված ահռելի աղբյուրագիտական բազան՝ ընդհանուր հաշվարկով 254 կտոր, այդ թվում՝ մենագրություններ, հոդվածներ, համացանցային աղբյուրներ և կուսակցական -քաղաքական փաստաթղթեր: Հեղինակն օգտվել է մասնագիտական գրականության այնպիսի բազայից, որը հնարավորություն է տվել տեսական հիմքերի վրա դնել հայաստանյան կուսակցական լիդերության ձևավորման և զարգացման գործընթացը՝ դրա վրա ազդող փոփոխականները դիտարկելով քաղաքական տեսությունների պրիզմայով: Բացի ներածության մեջ նշված մեթոդներից, ատենախոսը կիրառել է նաև բովանդակային և համեմատական վերլուծության մեթոդները:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ պետք է նշել, որ ընտրված տեսա-մեթոդաբանական բազան արդարացված է արդյունավետ հետազոտություն իրականացնելու տեսանկյունից:

Թեկնածուական աշխատանքն ունի հստակ կառուցվածք, գիտական և տեխնիկական ձևավորված ապարատ, աչքի է ընկնում համակարգվածությամբ: Յուրաքանչյուր գլխի համար սահմանված են հետազոտական հարցեր, իսկ վերջում դրանց տրվում են պատասխաններ:

Այնուհանդերձ, հաշվի առնելով վերը թվարկած դրական կողմերն ու առավելությունները՝ քննադատաբար դիտարկելիս առանձնացրել եմ հետևյալ նկատառումները, որոնք ուզում եմ ներկայացնել Ձեր ուշադրությանը, հատկապես կառանձնացնեի ատենախոսին:

Եվ այսպես՝

1. Ցանկալի կլիներ թեկնածուական ատենախոսության ենթագլուխները սահմանել ոչ այնքան իրադարձային սկզբունքի, որքան ժամանակագրական բաժանման հիմքով քանի որ այդպես առավել հստակ և արդյունավետ կլիներ իրականացնել հետազոտությունը: Ժամանակագրական բաժանման վրա հիմնված ենթավերնագրերը նաև հնարավորություն կընձեռեին առավել հեշտ հասկանալ յուրաքանչյուր ենթագլխում քննարկվող հիմնահարցերը:
2. Աշխատանքում հեղինակը մանրամասն և ակադեմիական պահանջների համաձայն քննարկում և ներկայացնում է Հայաստանի կուսակցական լիդերության ձևավորման և զարգացման ընթացքը, սակայն կարելի էր որոշակի անդրադարձ կատարել նաև հետխորհրդային պետությունների կուսակցական լիդերության զարգացման գործընթացին և համեմատական մեթոդի կիրառմամբ վեր հանել կուսակցական լիդերության կայացման գործընթացի համանմանություններն ու առանձնահատկությունները:
3. Թեկնածուական ատենախոսության եզրակացության մեջ հեղինակը գիտականորեն փորձել է տալ կուսակցական լիդեր հասկացության

քաղաքագիտական նոր համալիր սահմանում, համաձայն որի՝ «կուսակցական լիդերն անհատ է, ով իրենից ներկայացնելով կուսակցություն, կամավոր համաձայնությամբ ստանձնել է կուսակիցների և ընտրազանգվածի շահերի ամբողջացման և դրանց իրագործման առաքելությունը: Այլ կերպ ասած, կուսակցական լիդերը կուսակցության վրա օրինական ազդեցություն կրող անհատ է՝ որպես որոշակի իրավիճակում իշխանություն իրականացնող»: Խրախուսելի է հեղինակի կողմից նոր սահմանման առաջադրումը, սակայն կարծում եմ, որ հեղինակի կողմից տրված սահմանումն առավելապես վերաբերում է քաղաքագիտության տեսական հատվածին, և հստակորեն չի ընդգրկում ՀՀ-ի կուսակցական լիդերների իրական գործունեության սահմանները:

4. Թեև թեկնածուական աշխատանքը ձևավորված է շարադրման և լեզվական բարձր հիմքով, այնուամենայնիվ առկա են խմբագրական որոշ վրիպակներ (էջ 31, 78, 95, 124):

Ամփոփելով վերոշարադրյալը՝ ուզում եմ ընդգծել, որ նշված դիտարկումներն արվում են առաջարկի տեսքով և միտում ունեն ատենախոսի կատարած հետազոտությունը դարձնել առավել ամբողջական և համալիր: Դրանք որևէ կերպ չեն նսեմացնում այն լայնածավալ, տեսական և կիրառական տեսանկյունից կարևոր աշխատանքը, որը կատարվել է և լրացնում է թեմայի շուրջ առկա բացը Հայաստանի գիտական միջավայրում: Ատենախոսին ամբողջությամբ հաջողվել է իրականացնել նախապես սահմանված նպատակների և խնդիրների կատարումը՝ տալով բարձրորակ գիտական արդյունք:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը՝ կարծում ենք, որ ներկայացված աշխատանքը լիովին համապատասխանում է գիտական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանին:

ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ,

Հասմիկ Շափաղաթյան

ք.գ.թ, դոցենտ Հասմիկ Շափաղաթյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար, ք.գ.թ. Մերի Հովհաննիսյան

10. 01.2024թ.